

Հ. Արևի - Գլուխօթաց

կապահով

Խաղադարձ 1907թ.

9
8



ԲԵՆ. ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ.

13 APR 2011

891.99
5-38

Կ Ա Զ Ա Տ ՈՒ Թ Ե Ա Ն Խ Ա Ն Դ .

Բ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ .

Մ - 222

Ով չի ձգտում ազատութեան,
Նա սողուն է գարշահոտ.
Ազատութիւնն է ձեռք բերում
Կուի դաշտում արիւնոտ:

1008
36174



ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՌԱՄՎԵԼՅԱՆ, ՊԵՂԱԿԱՆԱԿԱՆ 7
Էլեկտրոպետային գործարան Հանուն՝ Պոլիցեյսկայ 7.

14.08.2013

58214

Դ. Գառարանի վաղամեսիկ ընկերուհի
Նազիկ Վարդանեանի յիշատակ
Նոյն դասարանի աջակերպուհիներից:

1920 թ. 8 յուն.

Առաջնական համար 45 թ.
Առաջնական համար 45 թ.
Կայուց առև 3 մագիստրոս
առաջնական համար 45 թ.

Առաջնական համար 45 թ.
Կայուց առև 3 մագիստրոս
առաջնական համար 45 թ.

(81) 1920

ՀԱՅԱՍՏԱՆ ՑԱՆՑԱ

‘Յանուարաց դմիսայ ան
Ժորժ ԽՈՀԵՐ. ովհան չ-մզիչի’

Դառնացած հոգոյս թոփչքն է ճախրում
Անապատ դարձող հայ հայրենիքում,
Ու գործւում են ճապաղիք արեան,
Աւել, բըսնութիւն գազան վարչութեան:
Եղբ որ լսում եմ ուազմի գոռ երգեր,
Որ ինքնապաշտպան հնչում են խմբեր,
Նիրհած ու թըմբած միտքս է արթնանում
Ու սաւառնեղով անհուն եթերում՝
Կամ վերից սիրով կուզեմ նւաճել
Հակառակորդին՝ կամ զէնքով ջնջել:
Ապա թէ ապրել ազատ շնչելով,
Սիրոյ կենսատու աղբիւրի ջրով
Ծարաւս կոտրել ու հրաբորքոք
Իմ սրտի յոյզերն իբրև սուրբ բողոք
Տանջալից անձիս դէպ վեր առաքել,
Անհուն բարձունքին լսելի առնել։
Ահա կանգնած եմ գիտութեան վայրում,
Անդ հոգեսրարար երգեր է երգում
Գալող սերունդը ազատ զարգացած,
Զար բոնակալից իսպառ ազատած։

ՀԱՅՈՅ ԱՇԽԱՐՀ.

Ու լուսինը շառագունած՝
Դէմքն է ծածկում սկ ամպով,
Երբ լողնում է կարմիր-զազանն
Անմեղների արիւնով։

Ու բիւրաւոր դողդոջ աստեր
Ամաչում են փայլելիս,
Երբ տեսնում են մարդ բորենուն
Ծեր ու մանուկ լափելիս։

Իսկ զոհերի ազատասէր
Մայրն անվեհեր յղանում ու ճածիմ
Նոր ի նորոյ ու ահարկու բժյամի նաև
Սէդ որդիներ է ծնում։

ՅՈՅՍ.

Գիտակցութիւնն ներչնչում է
Իմ մէջ հաւատ լի յոյտով բայ խոս նու
Ու նէդ սիրտա թըրթում է սխան
Երազական յոյգերով։
Թեթև թեկով հոգիս թռչում առն
Միտքս այնտեղ է միշտ լինում, բայ
Ուր առն ու տեղ այրաց աւեր, բայս
Արեան ծովեր են դառնում։

Ուր գոռ մարտիկն ինքնապաշտպան
Շահատակում է առաջ։
Մըրըրկի պէս բոցից անցնում,
Պաշտպանութեան դէնքն առած։
Դէպ սարն ի վեր յօխորտագին
Խոյանում է ձախրելով,
Որ խորաբիք դիտէ վրտանդն
Ու անդ լինի սուրալով,
Սիրտս ու հոգիս քեզ եմ ձօնում,
Ինկելի յոյս, հայ հայդուկ,
Որ քո անձդ զոհ ես բերում
Հայրենիքիդ փառազուրկ։

Ներբին ՈՅԺ.

Երբ որ դիւական մըրիկ մոլեգին
Փշում է, բորբոքում հրդեհն ահազին
Ու բոցն ու մուխը զերթ սկ արեան գետ
Արագ սահանքով գնում են վէտ վէտ,
Թուխս սաւան սփուած սոռչորում յաւէտ,
Հըեղէն լեզուներն անդ իսկոյն և եթ
Լափում ամեն ինչ և մոխիր դարձնում.
Ոհ, այդ ժամանակ իմ մէջն է զարթնում

Մի անձառելի քընած զօրութիւն,
Որ տալիս է ինձ յոյս, յանդգնութիւն
Դիւածին մըրկի հետը կուելու
Բորբոքւած բոցն՝ իմ արիւնով մարելու:

ԱՐԴԱՐ ԶԱՅՐՈՅՑԹ.

Ես էլ չեմ կարող լոել մոռանալ,
Օջախիս պատւին պաշտպան չդաւնալ,
Երբ սադայէլի զազիր ճիւազներ
Վառում են իմ մէջ զայրոյթի շանթեր:
Ու դժոխային առելի լուծը
Ճնշում, խեղում է իմ պարանոցը:

Հրաշէկ շամփուրներն թշնամու ձեռքով
Թէ ծակեն կուծքս մահացու վէրքով,
Այնքան չեմ զգայ ես ցաւ ու տանջանք,
Չեն ենի բերնիցն նզովք ու լուտանք,
Ոլքան այդ հրէշ և խելակորոյս
Պիղծ անտառակի գործերն անյոյս
Լցնում են հոգիս մահածին թոյնով,
Թոյնով դառնութեան կատաղութիւնով:
Մենք վիճակւած ենք անպատիւ կեանքի,
Լպից, անպատկառ վիրաւորանքի.
Մեր սրբութիւնը արհամարւած է,
Մարդը բորենուցը այդ պղծւած է:

Այլուում է սիրոս, կուրծքս պատառուում,
Կասես երկինքն է գլխիս փուլ գալում,
Երբ ձեռքս ծալած, կապած կաշկանդւած,
Տեսնում եմ հօրս տունն ապականւած:

Մասսի քաջըեր, ես ձեզ եմ կանչում,
Ձեզ հետ էլ մէկ տեղ արշաւանք գործում:
Գոռաց ամպրոպն, փալեց շանթ, կայծակ,
Դղբղաց Մասեաց վիհն անյատակ,
Որտից գուրս թուան կտրիչ ոգիներ—
Սուրբ իրաւունքի հզօր պաշտպաններ:

ԱԱՃԿԱՀԱՅԻ ՆԱԽԱՏԻՆՔԸ.

Ձեզ եմ դիմում հայոց աղքի,
Զգուշ, խոհեմ խիկարներ,
Ցոյց աւէք մեղ ճար ու հնար
Որ պաշտպաննենք մեր գառներ
Պատառող գազաններից
Զուլումի այս աշխարհում,
Ուրտեղ հաւի փոքրիկ ճուտը
Հայից թանգ է գնահատում:
Գիտեմ, որ գուք՝ բազմած թաւշեայ
Քնքոյշ շքեղ դւանում,
Ընտիր գինով ոգեորւած
Մեր մասին էք մտածում.

Այդ ըմպելիք ձեր ուղեղում
 Շատ ծրագիր է կազմում,
 Խրատ տէք, թէ ինչ անենք,
 Երբ թիւրք աղան հիւր գալում,
 Ուտում, խմում, «դուշ քիրասին»
 Զէպը դնում, ու ապա
 Յագեցած չար վագրի նման
 Յարձակում է ինձ վրա,
 Զարկում, ջարդում, վայր է ձգում
 Ու տիրանում տուն տեղիս,
 Յետոյ դիմում կեանքիս ընկեր,
 Հոգուս հատոր Զանոյիս,
 Գլխի երկար սիրուն մազով
 Զեռքերը պինդ կապելով,
 Իմ կուրացած աչքիս առաջ

Դէհ ասացէք, ես ինչ անեմ,
 Քաղաքագէտ պարոններ:
 * *

Երբ վերքս քիչ առողջացաւ,
 Տւի անչափ բողոքներ:
 Կաշառք առան, ինչ ունեի,
 Դատաւորներ՝ դատիներ,

Բայց հետևանքը այն եղու
 Որ կորցը իմ գեղանի
 Ու հրաշագեղ կոյս աղջիկըս
 Ախ, իմ Գիւլին աղաւնի:
 Մօրը Ակող, բոնաբարող
 Լիրը գագանի ընկերը
 Եկաւ հանդից յափշտակեց,
 Առևանգեց իմ գառը.
 Այդ մասին էլ բողոք տւի,
 Պատասխանը այս եղաւ.
 «Գնա կորի, քեաֆիր-գեավուռ.
 Մեր ուղղափառ հաւատի
 Պայծառ շողքը լուսաւորեց
 Խաւար սիրտն անհաւատի.
 Գնա, փառք տուր մեր Ալլահին,
 Որ գրախար կբանայ,
 Ու աղջկանդ միջնորդութեամբ
 Քեզ էլ այնտեղ տեղ կտայ»:

* *

Երբ մենք չարքաշ թշւառ կեանքով
 Արին քրտինք թափելով,
 Կալ ենք կալում թեղ ենք քամում,
 Ցորեն գարի շեղջելով,

Մէկ էլ տեսար ահա եկան

Հասան-աղի լիբը մարդիկ

Տամնեակ դատարկ զբաստներով

Ու բռնցին դուռ, երդիք.

Առանց մեզի հարցնելու

Շեղջն են լցնում բեռները.

Հակառակողն ընկնում գետին,

Զեռքով բռնած վերքերը:

* *

Երբ մեզնից մէկն իւր մարդկային

Իրաւունքն պաշտպանէ,

Չարագործին իւր արժանի

Պատիժն իսկոյն հասցնէ,

Այնունեակ կարմիր գաղանն

Իւր զօրքերով անխնայ

Ամրող դիւղեր ու քաղաքներ

Կործանում է աշկարայ.

Անծալը, անվերջ սպանդանոց

Կը դարձնեն ողջ երկիր.

Մեր շէն օջախ, քաղցր վաթան

Կայրեն, կանեն ու մոխիր:

* *

Դէն, ասացէք. մեր խիկարներ,

Մինչ երբ այսպէս մորթուենք,

Անարգութեամբ ու խայտառակ

Մինչ երբ այսպէս կեանք վարենք:

Վախենումէք, որ մի գուցէ
Խնդրենք մի քիչ օգնութիւն.

Դուք ստիպւած կրէք զրկանք,
Ցոյց տալով աջակցութիւն:

* *

Որքան մենք շատ համբերեցինք

Արիւնոսւշտ գազանին,

Պաղատագին արտասուքով

Մենք փարւեցինք ոտքերին,

Այնքան նա խիստ կատաղեցաւ

Մեր արիւնով զինովցած:

Ապա միայն ելանք լեռներն

Մի քիչ ազատ շունչ քաշած,

Ու կուռում ենք միշտ անվեհեր՝

Դիւցազնի մահն կուի մէջ

Մենք նախադաս համարեցինք

Քան ստրկի կեանքն տան մէջ:

Գիրդազոհ ԲՈՂՈՔԸ

Սիրաս լիքն է դառն վշտով,

Իսկ զլուխս ծանը մտքով.

Ես ում դիմեմ այս բողոքով,

Որ քիչ օգնէ ցաւիս շուտով:

Մարդին զըռում մեղքի դաւթար:
Թող իմանայ ամբողջ աշխարհք,
Որ չի տայ մեզ ճար ու հնարք,
Թէ լարողներն այս չար թակարդ
Քաղքից կառնեն մասն ու մակարդ.
Գիտես ինչով.

—Աջնամբիւրով,
Զայի փողով,
Բնծաներով:

ԳԱՐՈՒՆ

«Հայ-հոն, չես գիտէ,
Գարուն է եկէ»:
Հանձնաւ ի Սիրիք
Հարաւային ջերմ քամուց
Արդ համում են ձիւն, սպոյց,
Առւակները քքչուն
Վերից վայր են խոխոջում:
Հիւսիսային սաստկաշունչաւանն
Ցուրտն անողոք դառնաշունչ
Լոել է, ել չի փշում,
Բուր ու բորան չի անում:

12

Մեր գիւղում կան մի շարք մարդիկ,
Չըիսկեր անխիղճ անձինք,
Որոնք կպել են իմ պոչից,
Ել պոկ չեն դալիս ինձանից.
Անուս, թերուս մեր քահանան
Պատուհաս է և հոգեհան
Ոչ ինչ չէ տալիս շահեկան,
Բայց պահանջում տուրք անխափան:
Գիւղի իշխան կամ դատաւոր
Կաշառակեր է նենգաւոր.
Թաս արախով ու չաղ հաւով
Ինձ զրկում է իւր վճռով:
Ուս, գզիր ու հարկահան,
Չարչի, հեքիմ ամբարտաւան
Ինչպէս տզրուկ ծարաւ արեան
Ծըծում ծուծն իմ ընտանեկան.
Ազան, անկուշտ չար վաշխառուն
Իր զզւելի բաժակի թոյն
Խմեցնում է մինչև մրուր,
Որ ստանայ տոկոս բիւր:
Այն ստանի ծնունդն վատթար,
Ապլակաթ է, ինչ զահրումար,
Իր չարութեան գրչով՝ արդար

Մթնոլորտը, որ լիքն էր
Սարսուռ ազդող սուլոցով,
Առաւօտեան ցնծում է
Այդ աւետող ձայներով:
Գարնան գուշակ թռչումներ
Ուրախ, գւարթ եկել հիւր,
Նորոգում են հին բներ
Ու գայլայլում երդ բիւր:

**

Անհետ են կորչում երազի նման,
Ցուրտն ու խաւարը մահաշունչ ձմռան,
Որ խիստ սառցային ահեղ կապանքով
Գերել էր աշխահրք իր ամբողջ կեանքով:
Ոհ, քո վերայից հով ու զով զեփիւռ
Շնկանկալով է անցնում համասփիւռ,
Ու դալուկ դէմքիդ համբոյր անուշիկ
Եւ գուրգուրանքներ շռայլում մեղմիկ:
Ամառայ տապն էլ բնաւ չէ կարող
Խամբեցնել քո սիրուն, վեհ պատկեր,
Որ պիտի ազատ վայլէ յար աճող
Ընձիւղների պէս նոր, արգասարեր:

Ա.ԶԱՏՈՒԹԻՒՆ.
Աղատութեան արշալոյսը
Իւր երփներանդ գոյներով
Ողողել է արդ սար ու ձոր՝
Լոյս է տալիս մեծ յուսով:
Աղատ կեանքի ջերմ սիրահարնոսաց
Թող վեր կենայ ու վագէ
Դէպի առաջ վառ արշալոյս,
Նոր աւետեաց երդ լսէ:
Ուր երգում են աղատութիւն
Բընակալի ծանր լծից,
Որի տակը հեծում, մաշտում,
Մեռնում է մարդ տանջանքից:
Ուր երգում են աղատութիւն
Պաշտամունքից սընոտի,
Որի մոլար քարողութեամբ
Կաշկանդւել են միտք, հոգի
Ու մնացել անքակտելի
Քան շղթայածն երկաթով
Կամ որպէս մի մեռած կրակ
Ծածկւած են մոխիրով:
Անդ երգում են աղատութիւն
Անխիղճ, ազահ հարստից,
Որ զըզւելի սարդի նման
Ծըծում նորա արիւնից,

Ով ընկնում է իւր գիւտական
Հիւսուած ոստանն նենդալից.
Ուր զոհւսւմ է նորա կրքին
Հէդ բանւորն սև քաղցից:

Ազատութեան սիրոյ խանդը՝
Որ շատ սրտեր բորբոքեց,
Դուլ ու գագար չէր տալիս քեզ՝
Մինչև որ իսկ հասցրեց
Ընկերական սուբբ դրօշի տակ
Ուր կուում ես անվեհեր
Տապալելու չար բռնութիւն
Ու դնելու վեհ հիմքեր.—
Ազատ կեանքին, անկախ մտքին
Զարգացում տալ բնական,
Ու միշտ դատել արդարութեամբ
Ամեն մի գործ իսկական,
Ընկերական հաւսար դատով,
Որ չեն լինի զեղծումներ,
Ուր մեծ արժէք չեն ունենայ
Ամբարտաւան իշխողներ,
Չեն վստահի ստել խաբել
Փարիսեցի մարդումներ,
Ոչ էլ խարդախ փողատէրը
Կը կեղեք աղքատները:

Ծանոթագրա աղոթ հարծով

ՈՐԴԻՒՆ.

Այս գահաւէժ կեանքի յախուռն յորձանքում,
Ուր փրփրադէղ կոհակներն են խորտակում
Ամեն մի թումբ ընդդիմադիր ու սահում,
Պիտ նելշնչես, որդեակ, քաղցր յոյս իմ սրտում:
Նայիր մօրդ գորովալի աչքերին:
Տես, սիրոյ հետ կաթում կայլակ վըշտերին,
Անդ խիսդ ու լաց, ժպիտ, թախիծ միասին
Մերթ հըրճւեցնում, մերթ մորմոքում են
հոգին:

Նա գըլսովին համակւում է ցնծութեամբ,
Երբ կյուսայ որ ցօղաբեր իրեւ ամպ
Պիտի ցօղես սիրոյդ շիթովն անուշիկ
Մարդ-բանական բուրաստանի ծառ, ծաղիկ:

Նորա սիրտը տոչորւում է չարաչար,
Երբ քո մէջը նըշմարում է հող յարմար
Դաժան, պղերգ ոստիկանին, կղերին,
Որ նստում են ժողովրդի ուսերին:

ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ԶԻՆՀՈՐԻՆ.

Ճշմարտութեան գսո զինորը
Հրազդինւած կանգնել է

Արդարութեան ոգով լցւած
 Գրոհի ժամին կսպասէ:
 Նորա յոխորդ կերպարանքից
 Զարհուրում են տըկարներ,
 Իսկ նենգաւոր ախոյեաններ
 Պատրաստելով դարաններ,
 Ապարիզից ահաբեկւած
 Քաշւում են մութ, խուլ անկիւն,
 Որ այն տեղից միշտ անվըէպ
 Թափեն նետեր մահաթոյն:
 Տեսնում է այդ խիզախ զինւորն,
 Արհամարհու ժըպիտով
 Ու զայրագին սըրամըսութեամբ
 Նախատում է զըզւանքով.
 Շամփրում վատթար ախոյեանին
 Մէդ, շեշտակի նայւածքով,
 Ապա դառնում վախկոտներին
 Յաւակցաբար ասելով.
 «Ինչու այդպէս զարհուրանքով
 Սարսափումէք, ով մարդիկ,
 Ու ընկճւած խոնարհումէք
 Միշտ ծալւելով մինչ գօտիկ.
 Սողոսկում էք որպէս զեռուն
 Բոնակալի ոտքի տակ

Եւ ծաղրալի միմոսութեամբ
 Լինում այպն ու նշաւակ
 Դոռոզ, տխմար իշխողներին...
 Զեր ձեռքով ձեզ տանջումէք
 Ու այդ չար պիղծ սովորութիւնն
 Որդոց որդի կաւանդէք:
 Սարկական անարդ կեանքից
 Ի՞նչ հաճոյք էք ստանում:
 Խեղճ թշւառներ, դուք կեանք չունիք,
 Բայց և մահից էք վախում:
 Եւ ստրկի մահն անողոք
 Իւր ճիրաններն գարշելի
 Խոր թաղում է ձեր սըրտերում
 Ո՞հ, այդ մահն է նողկալի»:
 ԱՔՍՈՐԱԿԱՆԸ.

Տապից խորշակից ուժասպառ եղած
 Մեծ ճանապարհի մէջին է ընկած
 Մի երիտասարդ, թոյլ, կմախք դարձած:
 Ձեռք ու ոտքերն էլ շղթայի զարկած:
 Ու նորա շուրջը մըռայլ ու դաժան
 Դէմքեր են կանգնել ծարաւի արեան.
 Մէկը ոտքերով խթում է կողքին,
 Միւսը մըտրակով զարկում թիկունքին.
 Երրորդը սաստիկ զայրոյթն երեսին

«Գնանք թող սատկի», ասում երկուախն,
Ու հայնոյում է ազգ ու սըբութիւն,
Թափելով գլխին նախատինք անհուն,
Սակայն ընկածը անորոշութեամբ
Նայում է մարած անտարբերութեամբ:
Նւազած ձայնով մի պուտ ջուր հայցում
Ու կրկին լըռում տանջանքի բովում:
Այսպէս են քշում աքսորականին
Դէպի ցուրտ ու տաք կողմերն աշխարհին:

ՔՈՒՐՄԵՐԻՆ.

Առասպելական խուլ բաւիդներում
Պայծառ հոգիներն պահել էք տըքնում,
Որ ծրծէք ինչպէս տզրուկներ ագահ
Խեղճ ժողովրդի արիւնն անխնայ;
Գարշանք ու նողկանք են միշտ ձեր բաժին
Դուք, որ ձգտումէք ուժ տալ շղթային...
Կապում, կաշկանդում սին պաշտամունքով
Ազատ մտքերի թոփչքն՝ անվրդով:
Զեր խիղճն է մեռած, սրտերդ սկցած,
Ամօթ, պատկառանք իսպառ վերացած:
Սըտութեան որդիք, ձեր բուլոր կեանքում
Միշտ գիտակցօրէն կեղծում էք, խաբում:

Դուք չէք հաւատում ոչ մի սըբութեան,
Բայց քարոզում էք մի սուրբ էութեան
Անտեսանելի գերագոյն գործեր,
Որ մութ ամբոխն բերեք սարսափներ,
Այս, խեկղատակներ:
Անարդ գերի էք զազիր կրքերիդ,
Ինչի էք գովում, անկեանք կոքերիդ.
Մի թէ կարծում էք, որ այսուհետև
Էլ պիտ հաւատան սրտին ակներև:

ՎՇՏԱԼԻ ՀՆԿԵՐ.

Խըղճուկ, իմ ընկեր, դու խիստ ես տանջում
Դառն ցաւերի վշտի տակ հեծում,
Կիսամերկ, քաղցած, ցրտից կուչ եկած
Թախծալի դէմքով ըլլինքդ ծըռած:
Դողդոջուն քայլով գնում ես: Բայց ուր
Թունալի կեանքի մահաւիթ մըուր,
Թէ յոյսի անուշ կաթիլ ծծելու,
Դառնայսած սրտիդ զովութիւն տալու:
Ո՞ր տեղ ես թողել կինդ սիրասուն,
Որ միշտ անսմոռաց յիշում քո անուն,
Հըեշտակի նման զաւակներիդ հետ
Անզօր կուելով սովի, մահւան հետ:

Եցւում է հոգիս բուռն զգացմունքով
Ու ես յօժար եմ քեզ համար կեանքով
Զոհւիլ գոնէ քիչ օգնելու մտքով,
Վշափող սփոփանք տալ մի հնարքով:
Ի՞նչ է պատճառը մեր անբախտութեան
Մենք ենք հասցրել մեզ այս նեղութեան,
Թէ ուրիշներըն են մեզ այդ պատրաստել
Մեր կեանքի հիւթը լափել, կլանել:
Եկ, ճշմարտութեան սալրասուր զէնքով
Ճղենք կրծքերս՝ մեր սիրտն հանելով,
Եւ դնենք ի տես հանուր մարդկութեան.
Տեսնենք, կդտնին մի հետք չարութեան:
Ահա մեր սիրար—մաքուր է յստակ,
Թոթուում ինչպէս դարնան թիթեունակ,
Միշտ ոգևորւած պարզ զգացմունքով,
Միրել ընկերին աննենդ վարմունքով:

ՄԻ ՊԱՐԾԵՆԱՐ

Մի պածենար, ծով ծիրանի,
Խաղաղ, մեղմիկ ծփանքով,
Եւ դու սիրուն, կալոյտ երկինք,
Աստեղազարդ կամարով.

Մինչդեռ ազատ մարդու սիրտը.
Լի ամենայն բարութեամբ,
Կրաբախէ ընկերական սիրոյ սնարազդը ։
Անուշ հաճութեամբ ։
Թող ովկեանի ահեղ ջրերն
Լայնատարած հոսանքով
Բնաւ երեք չպարծենան
Եւ շառաչող լորձանքով:
Մինչ բանական ուշը, միտք, զեղուն,
Խորախորհուրդ խորհերով,
Մերթ դէպ անցեալն է սլանում,
Ակնթարթի թռիչքով:
Եւ մերթ բաղխում ապագային,
Խուռն չոյսերի յոյզերով,
Հազարաւոր տարիների.
Գործեր անդուլ զննելով:
Թող տիեզերքն համայն անհուն,
Իւր բիւրաւոր աստղերով.
Չպարծենայ անգիտապար,
Եւ անքնին գաղտնիքով:
Մինչդեռ մաքուր, պայծառ հողին,
Վեհ, գեղեցիկ ձգտումով
Գիտակցաբար, ջանք է անում
Սար, ձոր հարդել եռանդով:

Լինել բարձր ըմբռնումով, ուսրա ոքրչայ Ս
Միշտ անեզր, անսահման, պայ միտմես վ. և
եւ գերազանց ամենս բանից, կիմ խվազազի
Միշտ երազող նորութեան ամենածածած բառը

* * * թօն մամիլու բառ
խոցասուծ նազառամխալ

ՀՊԱՏԱԿԻ ՕՐՀՆԵՐԴՔԸ

Մինչ երբ, եղբայր, մենք ողողենք
Այս անցաւոր փուչ աշխարհք,—
Մեր արցունքով ու քրտինքով,
Եւ միշտ կրենք հալածանք:

Անմեղ զոհի արեան շիթով,
Ծլած, ծաղկած վարդ, շուշան
Բոյը են տալիս, զարդ են դառնում
Բոնակալին անարժան:

Ու կենսամաշ աշխատանքով,
Կուած ծանր շղթաներ,
Կաշկանդում են հէգ շինողի,
Նկուն բաղուկն ու ոտներ.

Մեր հայրենիք ցաւ ու կրակով:
Տոչորւումէ, կեանք չունի.
Բաւ է, որքան համբերեցինք.
Համբերութիւնն վերջ ունի:

Ժանդ բոնութեան գէնքի շաշիւն, առ
Ու շղթայի շառաչիւն,
Արիք փոխենք ըմբռստ երգի,
Երգենք ազատ զւարթուն:
Խիտ շարքերով առաջ գնանք,
Ցոյց տանք մեր ուժ զօրութիւն
Որ խորտակւի մեր թշնամին,
Կորսւի նրա բոնութիւն:

ԾԵՐ ԾԱԽԱՆ

Ծերունի գեղջուկը անհաստատ քայլերով,
Մօտեցաւ աւելին, առաւ այն տնքալով,
Թուլացած թերեն այնքան ուժ չունէին
Որ առաջւայ նման անցքերը մաքրէին:

Զեռքերը գողացին, աչքերը մինեցին.
Աւելը վայը ընկաւ, ծնգները ծալեցին.
Նստելով սառն հողին, թէք տւեց արմունկին
Ու նայեց իւլ շուրջը, գէալ կապոյտ ջինջ երկին
Արթնացան նորա մէջ անցեալ դառն անցքերից
Տիւրագոյն յիշ ատակը՝ մանկութեան օրերից.
Երիտասարդ կեանքի, պատկերներ տանջալից
Անցնում էին մտքովն մէկ մէկու ետեկից:

Ահա այն մանկան պէս կիսամերկ ու քաղցած՝
 Շըջումէր փողոցում ողբ, անտէր մնացած.
 Փոխանակ գթութեան բաժինն էր հալածանք
 Հարուստի դռներից: Զգտաւ սփոփանք...
 Ճիշտ ինքն էլ սրան պէս շղթայի զարկւեցաւ,
 Երբ ազատ լըջօրէն քննել կամեցաւ:
 Խստերախ ձիերին սանձերն են լաւ ընկճող,
 Իսկ ազատասիրին բանտերն են կաշկանդող:
 Այնուհետ կորցրեց սեպհական համոզմունք
 Ճշմարիտ կթւէր ամեն մի նոր զեղծմունք:
 Չար, անխիղճ բռնութիւն օրէնք էր իր վրայ,
 Մի պատառ չոր հացի ինքը եղաւ միշտ ծառայ:

* *

Ազգի և հայրենեաց պատերազմի դաշտում
 Հէդ կուրծքը բաց արած, դէպ առաջ էր մւզում
 Անձնուրաց կուելով, եղել է արիւնքամ,
 Վիրաւոր ու գերի թշնամուն շատ անգամ:
 Սիրասուն որդիքը գգուանքով էր պահել,
 Բերնի չոր պատափից նրանց բաժին էր հանել.
 Զօրացան, աճեցին ու կտրիչ մարդ դառան,
 Բայց թշուառ ծնողին ցաւի մալր միայն եղան:
 Անդրանիկ զաւակին սպանեց թշնամին:

Երբ իրենք հինաբար կողոպտում ուրիշին.
 Իսկ գիւցազն կրտսերը իվրէժ իւր եղբօր:
 Ժողովեց ընկերներ — զինւորներ կամաւոր:

* *

Ալ աւաղ նրանից էլ զրկւեց յաւիտեան,
 Նա ևս մատնեց մի անհետ կորստեան:
 Թշնամու աւարով ու երկրով լղփացան
 Իշխաններն ու հարուստ կալւածքի տէր դարձան,
 Սակայն ինքն Էլ մնաց նոյն քաղցած կաղ զինւոր,
 Որ ամեն օր կողբայ իւր ցաւեր բիւրաւոր

13. ԳԱՅԱՆՔ.

Հին գազան չար գարաւոր
 Դեռ լափում էր մեր բոլոր.
 Սիրտն ու լեարդը յանցաւոր,
 Անում մեզ հրէշ բանաւոր:
 Մէկը տէր է ու իշխող,
 Միւսը ծառայ, աշխատող.
 Զկայ արդար ոչ մի տեղ,
 Որ այս ցաւին անէ գեղ:
 Սըտի, ուժի կարգերն են,
 Որ թէ թիկունք դառնում են

Աշխարհաւեր գազանին,
Ապականւած մտքերին:
Գիտութեան լոյս ճշմարիտ,
Փրկութեան այդ մարգարիտ.
Կանէ հարթ ու հաւասար
Կեանքի ուղին առապար,
Որ տանում է նոր աշխարհ,
Ուր մարդին են հեզ, խոնաբին ու ամ
Չեն ծաղրում իւր նմանին
Եւ ոչ զըկում ուրիշին:
Կապրին սիրով հաւասար,
Եւ կյարգեն միշտ իրաբ.
Այնուհետև գազանն հին
Այսպէս սատկումէ ինքնին:

ԼՌԵՑՔ ԶԱՆԴԵՐ

Լռեցեք զանգեր, էլ միք դողանջէ,
Բնաւ ոչ ոքի էլ միք դուք կանչէ.
Աղօթքի համար ժամ միք հրաւիրէ,
Թող նիւթապաշտը ձեր ձայն չլսէ:
Այդ երկնահրաւէր փողի քաղցր լուր
Կարող է արդեօք կանզնեցնել բիւր
Շտապող մարդկանց քայլեր խոտորնակ,

ԲԵՐԵԼՈՎ ՀՈՊԱ ՅՈՒՂԻ անվտանգ:

Եթէ կարող չէ,
Ել միք դողանջէ:
Կաջողւի արդեօք իսպառ պատուտել,
Կեղծ, պատիր դիմակն ու դէն շփրտել,
Որ թագաւորէ զուտ ճշմարտութիւն
Կատարելութեան, աէր ու միութիւն:

Յոյս կայ աջողւի,
Թող զանգը լուի:

Մինչեւ կոկորդը աղբի մէջ թալած,
Մանում է տաճար սրառվ սկացած,
Կանզնելով այնտեղ արդար ձկացած.
Աղօթք է անում կեղծ, բազկատարած:

Թէ չասենը մեղք է,
Միթէ ամօթ չէ:
Լռեցեք, զանգեր:

Միթէ ամօթ չէ, որ ինքն ուղում է
Պաշտիլ ուրիշից, բայց և պաշտում է...

Մարդ սարսափում է, որ ատող, զրկող,
Ստող ծուռ հողին լինի քարոզող
Հաւասարութեան անդորր կեանքի,
Եւ մարդկայնութեան վեհ սկզբունքի:

Բարոզը սուռ է,
Բայց չի ամաչէ:
Օ, նա հրէշ է,
Զանդ, իսպառ լոէ:

ԲՆՈՒԹԵԱՆ ՕՐԵՆՔ

Երկնքն է պայծառ, փայլում է արև,
Որ տալիս երկրին կեանք, լոյս ու բարե.
Մեծ սարի տակին կարկաչող վտակ
Մարմանդների հետ անում է կատակ:
Ուրախ է բնութիւն ցնծում է աշխարհ,
Հովիւն հօտի հետ բռնել սիրուն պար.
Սուլում է սրինգ, կայտուում գառն ու ուլ.
Անխոնջ գիւղացին գործում է անդուլ:
Ամեն ծառ, ծաղիկ բուրում են անուշ,
Նոր երջանկութիւն բղխում քաղցր անուշ:
Զովարար օդը կեանքի բուրվառով
Միշտ խնկարկում է դիւրական հոտով:
Նայում եմ շուրջս: Ամեն ինչ զւարթ,
Ամեն ինչ պայծառ ինչպէս կարմիր վարդ:
Զկայ մի չնչին միջատ կամ մի ծիլ,
Որ ուրախութեան չքամէ կաթիլ:
Երջանկութիւն է տիրում ամեն տեղ,
Անհետ կորել են, էլ չկան այնտեղ
Ոչ զազիր կրքի նողկալի յուզմունք,
Ոչ նախանձ, զրկանք, ոչ վատթար վարմունք:
Դրախտ է, կարծես երկնալին եթեր,
Ուր հին սերսվրէն պարզում է թեր,

Որ համեստութեամբ իւր դէմքը ծածկէ,
Ապա «Սնւրբ, Սնւրբով» զօրաց Տէրն օրհնէ:
Ափսնս այդպէս չէ,
Այլ խաբուսիկ է:

* *

Կեղծ խաղաղութեան վարագոյրի տակ
Խիստ պատերազմ է, կռւում են տաք տաք.
Զօրեղն անզօրի արիւնն է ծծում,
Սուտն ու նախանձն էլ աւերմունք գործում:
Տես, այն գեղեցիկ ծաղկից աննման
Օձն է պատրաստում դաժան թոյն մահան:
Ծիրանուն յաղթող վարդի թերթերում
Որդն է բոյն դրել, անդադար կըծում:
Խորամանդ աղւէսն պոչը քաշ տալով,
Անմեղ ձևացած՝ լուռ դանդաղ քայլով
Գնում է ինչպէս հրեշտակ է ճեմում,
Բայց խեղճ հաւերի հոգին է հանում:
Ախ՛, այն գիշակեր գայլն արիւնկզակ
Լափում է գառին, պոկում մօր դմակ:
Բաղէն սուր ճիրանն զայրացած խոդում
Սիրուն սարեկի ձագի թոյլ սրտում:

Երկինքն ամաչեց, վրէժիսնդիր եղաւ,
 Զարին պատժելու ձեռնամուխ եղաւ:
 Մթին սև ամպով իւր դէմքը ծածկեց,
 Եւ ամպը պային վճիռ արձակեց:
 Ահեղ որոտմունք, հրեղէն ցոլմունք,
 Բերին արհաւիրք, տիրեց վրդովմունք.
 Եւ քարակոշկոն տեղաց կարկուտ շատ
 Ոյգի, բուրաստան արաւ քարուքանդ:
 Դաշտի կանաչ բոյսն իսպառ ջնջւեց,
 Հէտ թռչունի էլ բոյնը կործանեց.
 Իսկ հեղեղն եկաւ, քշեց ու տարաւ
 Գիւղացու գոյքը ու շւար թողաւ:
 Խստագոյն պատժից ազատ մնացին,
 Թունալի օձն, չար բազէն ու ցին.
 Որդն զզուելի, աղւէս կեղծաւոր,
 Ու գայն ագահ, յոյժ վտանգաւոր:
 Այս է օրէնքը բնութեան և մարդկան,
 Սա է դատաստան այժմ և յաւիտեան:

Խարթաւան միար դժիւցք միւ ովմ
 Քանիք զոն նախուր միւսար չ նախաւ
 Նախուր նախաւար մնացին դոս միւսար
 Նախուր լուն գրան վիւկաս մայդան

Ա Ռ Ա Կ Ո Ց
 Ու դեռ չծէզած նետքն արկին արկին
 Շուտ խորտակւում են շղթայք խաւարի:
 Ցուրտ, մութ գիշերւայ տխուր թախանութեան
 Յաջորդում են զով ժամեր վաղորդեան:
 Այդ սև ու մթից թմրած բնութիւն
 Ողի է առնում կայտառ, զւարթուն:
 Պայծառ արշալոյսն է թագաւորում
 Անթիւ գոյներից կազմած պալատում:
 Պերճ առաւօտեան վարդագոյն նշոյլ
 Նսեմացրել էր վառ աստղերի բոյլ
 Եւ գեղածիծաղ ցոլք, ցնցուղ բիւր
 Սարերի գլխից փայլում համասփիւռ:
 Ծիրանի լոյսը լցնում է երկիր
 Վեհ ու սրբազան ջերմ զգացմունքով,
 Որ միշտ փոխւում է և ջինջ և մաքուր
 Սրտից գուրս թռած ուրախ բերկրանքով:

Հազար իրանի, ախ, այն օրերին,
 Եղբ բոնում էի մաճն իմ արօրին,
 Եւ առաւօտեան արշալոյսից վաղ

Ես լսում էի քո երգը « պող-վաղ » :
 Գիտեմ, իմ արտօնութ, դու, փոքրիկ տոտիկ,
 Որ լաւ պիտի յիշեմ և իմ մեղեգիք, ուր ո՞ւ
 Որ հերկ հերկելով մրմնջում էի, աղոսյ ուն
 մա « Զարթիք » , « Ալէլուք » . Ամզմհոսում էի :
 Քո քաղցր ճռւող, անուշիկ օրհներգոյած
 Գուցէ երկնքում ընդունւի աննենգ բայ
 Իսկ իմ « զարթիք » -ը, իմ ճշմարտութիւնը ուն
 Բերեց իմ գլխին անթիւ չարութիւնքա ճար
 Լծկանս աւար գող, անօրէնին յոր ովկում
 Եւ արտս արօտ է նրա հօտին առա ձղմթ
 Շէն տուն ու տեղս սրբեցին պարտիւնեամ
 Ու ընտանիքս թողին անպաշտական որդք ո՞յ
 Ու ես հէգ, թշտառ տարրագիր եղած պայման
 Հեռու, շատ հեռու մի անկիւն ընկած, ո՞յ
 Միշտ արիւն քրտինք թափելով անվերջ,
 Զեմ կարող օգնել զաւակներիս խեղճ ո՞յ
 Հայուայլից պայտ նառի սուրբ ընտայ ո՞յ
 * * *

Երբ միտս է գալիս, արտօնութ, քո ճռւող,
 Անցկալից սրտիս, տիրում սառն դող . . .
 Կարօտ պիտ մեռնեմ, ախ, տուն ու վաթան,
 Էլ չեմ տեսնելու իմ արօր, դութան:
 Էլ չեմ շնչելու ազատ, անսասան

Հայրենի երկրի գեցեցիկ գարնան ուղարյաջ
 Ծաղկանց հոտով լի բուրմունքնաւաննման:
 Համբուրելու չեմ շիրիմն հայրական քայ ոմ
 Արտերիս ընձիւդ գալարի ծլած՝ այնձյամ
 Կարծես իմ աչքիս առաջն են փուած: իսկ
 Միթէ ես նրանց չպիտի տեսնեմ բժիշտաթ
 Ու ըղձատոչոր գերեզման մանեմ: վմժյալ
 Դու մի քայ այստեղ, սիրելի արտութ, ոմ
 Ուր անձրեկ տեղ գալիս է կարկուտ: ո՞յ
 Սյնտեղ ճրւըլա իմ արտիվը: առաջ
 ընցի ու ըմբայ աղմաք չամաք
 ՎԱՐԴԻՆԻՌՈՂՈՔԸ նի դոյլ
 անցուամ դմինց ըմբացիալ ո՞յ
 Ես բացւել էի կանաչ պարտիզում,
 Թփերս փթթած՝ անուշ հոտ բուրում:
 Գոյնս աննման բոսոր, երփներանգ
 Ոսսո գեղեցիկ, անփուշ, անփտանգ:
 Քաղցրախօս սոխակ բիւր դայլայլիկով
 Թփերիս միջին երգում ջերմափրսված խաչ
 Ժրածան մեղուն նիւթ էր ստանում իւրից
 Ուկեզոյն փոշուցու մեղը շինուած ո՞յ
 Գողտրիկ մանուկներ, գեղանի կոյսերաց
 Հրձւում իմ տեսքով ու մատաղ սրտեր
 Լցւած խնդութեան պարզ զգացմունքով,

Զարդարում էին կրծքերն իմ փնջով:
Որպէս վայելուչ ու համեստ սեղան իր օ
Ես բացւած էի ծոցում բնութեան զայնաւ
Բարեմիտ մարդկանց հաճոյք պատճառում,
Իսկ սև սրտերին նախանձը շարժում:

Պարտիզի տխմար տիրոջ բիրտ ծառան
Վայրենի խանդով լցւած գերդ գաղան,
Կամեցաւ վրէժ լուծել մի կոյսից,
Որ չէր պաել իր փունջն իմ վարդերից,
Սուաւ էտոցը կտրեց ու կոտրեց
Կանաչ ճղներս, ջարդեց ու փշրեց
Բոլոր իմ թփեր, ոստերս սիրուն
Ու յափշտակեց կոկոներ նախշուն:

Հերթիսար շամաք ոչ յմբաց ամ
Հեռուոցն ո Ռ Զ ի Ն ա թ ի Ա ղ մ ի Պ
Բայրդամիջն զասու մանման սիրք
Թշւառ ծնող, քաղցր երազով, մերձ սոսն
Որքան տարի մի լուսերով սօսայցրա՞
Տանջւեցար դու չարաչար, մայմն սդյանի՞
Կրելով վշտեր, զրկանք հազար, որևս մահացի
Որ հարազատ որդիդ մի օր
Երախտագէտ սրտով բոլոր ունան լիզուրով
Քո տառապանք կմեղմացնէ ու նի նառածից
Երջանիկ կեանք քեզ կընծայէ յորման ծարը

Բայց խաբւած ես, ողորմելի ո չինչով
Խաղաղ կեանքի տէր չես լինիացազ բժի՞
Երազներդ չեն կատարւի, մու խասմ ո՞ն
Յոյսդ իոպառ կիորսւի:

Այս շահամոլ աշխարհիս մէջ ուր զիրծ
Կարգացել ես գրքի մի էջ, զանան փար ո դ
Որ մարդիկ սերտարեան կապով լիս բժի՞
Կապւին առանց ոսկիազով զիմի դ Մ
Ինչու են պէտք գութ աւ գորով, ու դի
Աէր ու սուրբ միրա լեցուն խանդով, երի
Երբ բոլորը խենէշ հոգով
Կուզեն ապրել շւայտ կեանքով զիմուն չկը

Քո խօսքերը նրան համար առաջն ոց ծն
Ատելի են ու անյարմար, ամենք մայս զի
Եթէ մէջ տեղը շահ չկայ, փոքինը միլի՛ Ա
Խօսելու էլ ինչ կարիք կայ:

Ե Ե Ղ Ծ Ա Ի Ո Ր Ի Ն

Փայտն է կոտրում իւր չորութիւնից, ո՞ւ
Իսկ մարդն ընկնում է յամառութիւնից, ո՞ւ
Այսպէս է ասում մեր ստրկական ուսութ
Կեանքի առածն հին, անարդական եարութ
Կամքով պիտ լինիս վափիուել ու կակռւղ

Ինչպէս ուռենուղալարի նոր ճիւղ, ու
Որից բոշաներ զամբիւղ են գործում բան
Ու տեսակ տեսակ կարասիք հիւսում բայց
Ճկուն ու ճարպիկ և առաջական քարծ
Եղիր դու մտքով գործով մշտական, այս
Քո օգտի համար նայելով տեղին, մըրայալ
Հոգիդ պիտ ներկիռ աեւ գործու գեղին, ու
Մի լինիր երբէք կամքի տէր, վեհանձ,
Որ չշարժես դու չաք մարդկանց նախանձ.
Ուժի կողմն անցիր, որ հանգիստ ապրիս,
Պատւով ու փառքով ճոխ, մլերճ կեանք վարես
Եթէ ճեռքիցդ ոչ մի բան չի գոյց, ա մըրայ
Խօ քո բերանում այնքան լիեզու կայ, ո՞յ
Որ սրան քծնես, նրան շողոքորթես, մըմալ
Մէկին գովելով, միւսին պարպաւեմ, և չնյ
Լայ զիդաք չմի յէ այլնուն

Ս Ա Ր Ե Ա Կ Ի Ն

Միթէ և դու ամպի նման
Չունի՞ս յատուկ հայրենիք, յառի չ մայսի
Որ դառնաշունչ քամու ճեռքինց մրցան յան
Դառնում է միշտ խաղալիք, սա չ սիսակ
Թողած բերրի արտու հովհանոս վճառմ
Քաղցը ցողով ցողելու,

Մղւում է դէպ անապատներ
Աւազները ջրելու:
Հին բարեկամ, սիրուն սարեակ,
Ինչնւ եկար դու այստեղ,
Ուր չկայ ոչ ծաղկի մի փունչ,
Եւ ոչ կոկոն վարդագեղ:
Այն ծաղկածին հովիտները
Ու լեռները հովասուն
Զէին կարող ասպնջական
Լինել թուչնիդ միրասուն:
Նայիր շուրջդ, տես, բոլորը
Աւազով է ծածկւած,
Ինչպէս արդեօք պիտի մինես
Քեզ համար բոյն կաւամած:
Դարձիր, սարեակ, հոգիդ սիրես,
Դէպի Մասիս, Արագած Յ Վ Յ Ս Գ Յ
Կարօտակէդ ողջոյնս տար
Հայրենիքիս սիրազգած:
Գէթի իմ տեղը դու վայելիր
Եղեմական ծաղկանց հօտ
Եւ զովարար ջուրն աղբիւրի,
Ուր արձում է զառանց հօտ:

Վիշտու նոյ մեջ յոցմազգեցի մատնալ

Ք Ն Ք Ո Յ Շ Ա Կ Ի Ց.

Ոհ, տուէք ինձ մի դեղ ու ճար,
Ու իմ սիրտը քար կտրի
Ու գառնայ մի կարծր ապառաժ
Ինչպէս սկ ժայռ լեռների,

Որին բնաւ չեն ներդործում
Ոչ արտասունքն ամպերի,
Ոչ բնութեան պատահարներ
Եւ ոչ հարւած մուրճերի.

Որ էլ բնաւ ես չզգացւիմ
Թշւառի սուրբ արցունքով,
Ոչ ծանօթի կեղծ ժպիտով,
Օտարի նենդ վարմունքով:

Ն Ր Ա Ն Ի Ց Ե Ե Բ Շ Ե Զ Ի Ա Ծ

Չգացան իմ մէջ համայն մեղսական
Չգացմունք և կիրք, կարծես, էլ չկան,
Ոհ, երբ հիասքանչ պատկերդ տեսայ
Լոյս համեստութեան սուրբ Փօնի վերայ
Չինջ ժպիտդ անուշ ու ճայնդ գողարիկ
Անհուն բերկըանքով լցին իմ սրտիկ.

Երբ հրաշագեղ աչերդ անուշիկ
Դարձրիր դէպ ինձ խոնարհ ու հեղիկ
Չգացի իսկոյն մի քաղցր հարւած... մաք-մաք
Ու միտք-հոգիս էլ իսպառ փոփոխւած: Մ
Ի՞նչ էի արդեօք այդ վէճ բոպէին: Այս
—Մի հոգիացած Երջանիկ էակ, ունցի
Որին ցաւն ու վիշտ մատչելի չէին, և մզի
Կամ նորածնած սէր, հրճւանք համակ,
Որ իրեն անմեղ սենչերի խոներ այս
Քո մասին, հոգեակ, չափաւորում էր: յադ
Հրաշալի ես ոչ միայն տեսքով բայց նայր: Ա
Այլ և հոգեկան զւարթ յոյզերով այս վիշտ
Չունիս դու բնաւ մի չնչին արատ, պարագ:
Բնութիւնն արել է քեզ անարատ: նման յոթ
Ալի, դու լաւ գիտես դիւթիչ ակնարկով յի
Եւ քո բնածին բարձր լմբանումով գմինան
Այրել ու մաքրել սրտերն աղտեղի
Ներշնչել վսեմ, մտքեր պաշտելի:

Ն Ր Ա Ն ...

Սառն աղբիւրին շատ մօտիկ կետե յար
Չքնաղ, սիրուն, վառ ծաղիկանց դպրախման
Ծաղկել էր յոյժ աննման մաժնդի և սպան
Գունով, հոտով պատականան ափառչիալ ան

Ու նա ունէր պերճ, հարուստաշայք զյշ
Ոստեր չքեղ արտաքսւատ նմի բար զիդզար
Գոյն-գոյն թերթերն փթթած՝ միուսի վըարջ
Մի ճռիս պսակ են կագմած: սիրու-ցանին ո՛ւ

Անուշահոտ կոկնում քա գօմրյա վէ չմագ
Գործօն մեղսի սեղանում նազայրո՞ւ յՍ—
Լիքն է առատ մեղրի հիւթի ու մար միջն
Եւ լոյս տւող մոմի նիւթի հասնացո՞ւ նաթ

Այդ ծաղիկը դու ես, նէ, բնիսա մմդյ յն
Քեզ իմ սիրտս է նուիրէ աւերո՞ւ մմխան ո՞ւ
Մեղրածորան քաղցր խօսքով ու միաշայէ
Յրտիր վիշտս իր տանջանքով: այժմքո՞ւ և յԱ
Հրացայտ, պայծառ քո նայւած ուր սիմո՞ւ
Թող ինձ լոյս տայ վերածնւած, մերի վերած
Որ նոր կեանքով կենսունակ այ առ ով Ա
Ապրինք երկար ժամանակ: մինանդ ոգ ո՞ւ
Վիմուրա մղման յմցան ու յմցի միմայս դմզոն ենսի յմցոյնմ
Ս ի Ր Ո Յ Ե Ր Գ.

Կար ժամանակ, որ յօրինում էի մոսԱ
Տանջանքի քնար ու երգում էի յիս քամզ
Քնարս է թթիոն սիրավառ արտիս յմբրաԾ
Ու յափշտակումն խանդավառ մտքիս յուրո՞ւ

Ես երգում էի ծաղկածին հովառով զիշ
Զքնաղ կոյսի սէրն, որ ինձ էր գերումառն
Հովտի բուրմունքով, կոյսի մրմունքով յՍ
Գինովնում էի ինչպէս նեկտարով աջամ

Թէ մեղմիկ զեփիւն ճով ու գով չնչով
Թէ առւակի պարզ ջուրն իր կարկաչով յիզ
Զայնակցում էին իմ սիրոյ երգին յույ րո՞ւ
Որ ներդաշնակ էր ինչպէս երկնային նոյն
Սբասացութեան քաղցր մեղեդի, ճ գտիաք
Որ բնութեան մէջ լսւում պմենադիր մոյջ

Այս օրն երգութեան ձայնին բառ առ ոքառ
Արձագանք կտար ձոր, այր ու անտառ
Սիրում էի կոյսն հոգայ սբառութեամբ յուր
Ու պաշտում նըան համայն էութեամբ: ոմ
ՀԱՅԴՈՒԿՈՒՑՈՒ ԼԷԼԵՆ.

Հանդա գիգայ իմ ճէլլան, և Ս
Զինար բոյին ես զուրբան.
Վայ լէ, լէ, լէ, վայ, լու լու հմի մմա Ս
Թւանք ի յուսնի ճէլլարսուն գնարայ և
Կապել ասպապ-ամեն բան, ը հմի յիզիք չո՞
Ես քե ճէլլարն, իմ ասլան: ու որո՞ւ քայլի
Վայ լէ . յուրայ յուսա վայարատ մոհ .
էն ծառի կարմիր ինձոր ճորոյ բոյզի

Վէր ընկաւ գլոր մլոր, իժ նորդ ոչ
Առայ, տւի իմ եարին, ուղձս մայոյ բացօ
Սիրտս հու խոգիս էլ բոլոր և նուզուոյ մայուն
Եարջան, քու ջանին մատաղ, և ուժուով
Զիս մը թորիէ յուղա սաղ, յիմորմն չժ
Արի, սպանէ, եա առ, տաղ, յիմառու չժ
Թող խոգիս տամ քու դուճաղ, և ուցյամբն
Էրնէկ էր էնա տարին, յա յամշարդմ զի
Գացինք ծըռ արտի դարին, մամն որդասապյ Ս
Տիւն գերանդով հունձ էրիր, մամն ունց զի
Ես զոռ տւի տրմիին, և նորդմն ոչ ոչ
Հմկա էլի մենք մէ տեղ յարի զմարանդմ
Կուփ էրթանք ամեն տեղ, մարի դժ նորդ Ս
Ես քու եարէն իմ լեզով նուշար և
Կը լաւցնեմ առանց դեղ:

Ս ի թ ո վ թ խ լ ո չ ե ր ս ր մ ն ա
. մայդար ու մ մի ո յ դ յ ա մ յ շ

Մահն ինձ համար քաղցր քունէ և լայ
Ու երազանք հանգստեան, վմառու վ զմարմ
Թէ գիրկդ ինձ դադաղ լինի, յախսա յիրաք
Սիրտդ հոգուս սուրբ կայեան նուզմ ոց ու
Հոն տապակւի սրտիդ իւղով, և լայ
Սիրոյդ բոցով ճենճերւի յինպայ մուս մը

Խեղճ հոգիս ու գոլորշու պէս մին ժիշ Ս
Քո ախիդ հետ դուրս թոշիւնքով յայսմ
Այն ժամանակ, ոհ, ես գիտեմ, ոյ նաք
Սիրտդ թափուր կը մնայ նարու զուցա Ս
Ու անձկալոյս վառ կարօտով և նահանձնան
Ըղձատոչոր կը դառնայ:

Սիրուն աչքիդ ջերմ արցունքով ա սկզբ
Գերեզմանս թող ցողի, յա յասաւի աշխա
Որ այդ անդին, ջինջ շիթերով է ու ու
Վրաս ծաղիկ, ծառ բումնի աստղու զոն
Զ Ա Հ է Լ Ն Ե Ր Ի Ն ջ ա յ ի
Ժ ո ւ ո ւ ն յ ա ր ն ա յ ա ս ո ւ յ ս
Ճիշտ է արդեօք, որ նրանց հետ
էլ ընդհանուր բան չունիմ. Ո ո յ Ա
Ի՞նչ իդէալ և ի՞նչ խոհեր
Նոքա ունին, որ չեն իմ:

Երբ նստում են ճաշ, լընթրիքի ըրու ո՞՛
Հրաւիրնւմ են կարօտին, որի նուսարմ
Կամ թէ փայլուն նոր շորերիցնեն յաւ Ն
Կտան բաժին աղքատին, յանի արին զոյն
Մաքուր, շքեղ կահաւորված ասպան նիշ Ս
Եւ փառաւոր գաճիմում միսախամին նիշ Ս
Աթոռ կտան խեղճ ուամկին ասար միջոցով
Մեծ հիւրերի շարքերում: Դա բանց ու դաշ

Միթէ հին մարդը մերկացած սլյուծ նրան
Ապրել կուզեն նոր հոգով, ոմն քիչա ոք
Կամ թէ սիրոյ աւագանում մանաւ մէս
Մաքուր լւացած սուրբ սրբով ան քայլվ
Ցանկանում են սիրել անկեղծ լուսածամա ո՛
Հէտ տառապեալ թշւառին, ով դոչուածր
Թերևս արդէն գոհ են պատրաստ, մարդվ
Ճիշտ իմաստով այդ քառին: Ամանր ծցծ
—Ոհ, չէ: Երբէք, Դեռ շնչում են քա դի
Խոր խոցուուած թոքերով, վիրած սաղի
Որոնք օգը վարակում են
Արտաշնչած գարշ հոտով:

ամ բանց զու գոճրդա չ աջի՞ն
Ա Ն Խ Ո Ն Չ Մ Շ Շ Ա Կ Ի Ն
Դ. Աղայեանի լորելեանի առնի
ամ բանց զու գոճրդա չ աջի՞ն

Քո յոդնավաստակ գործով փառաւոր
Սպասում էիր հնձի բեղմաւոր.
Աւաղ, անողոք ձեռքը բռնութեան նաք
Բոլոր ճիգ, ջանքդ մատնեց կորստեան
Մերթ հարաւային խորշակ հրատապ, առ Ս
Մերթ հիւսիսային կարկտարեր ամուսին
Զորացըին ցանած արտիդ ընձիւղներ,
Քար ու քանդ արին ծլած արմատներ:

Տխուր, վշտալի կանգնած եւ դաշտում
Մորմոքւած սրտով ու անյոյս դիտում
Խիստ սրտաճմլիկ տեսարան արտիդ,
Ուր թափել էիր քրտինք ճակատիդ:
Այս տեղ անխնամ որդիքդ փոքրիկ
Քաղցած շրջում են մերկ, ոտաբորիկ,
Այն տեղ վաստակի ոտքի տակ տւած
Ցըդիամէր խոզի բաժին է դառած:
Կայ արդեօք մի մարդ այնքան վատ
Որ չզգայ թէ ինչ ցաւ ընկաւ քո սիրո,
Երբ տեսնում է քեզ յուսաբեկ եղած,
Վար ու վաստակից խոզառ զրկւած:
Մի յուսահտուիր, հովեր են վչում
Թարմ օդ, քաղցր հոտ լեռներից բերում:
Շոյելով թէմքդ մուրուքդ ալեզարդ
Քեզ կոգեսորեն, կտան նոր եռանդ:
Դէն, անխոնջ մշակ, ձեռք զարկ քո մաճին,
Կորսիի բաղկովիդ ուժ տուք դու գործին.
Հերկիր ու ցանիր քո աշնանավար չ բայց
Յուսա, կքաղես արդիւնք բաւարար չ ի
: անաւունի չ այսու և առաջ ուի մրու չ ի
քրտանցան դմանաւ զուար զամարդին զման
զամարդաւ մզմացար ամի ծայրան զմիու

ՀԱՅՐ Դ. ԱԼԻՇԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ:

Մեռաւ Ալիշան,
Որ փունջ փունջ շուշան
Բերում էր ընծայ
Իւր ազգին հայկայ:

Հայոց աղջիկներ ձեր սիրուն դէմքի, միև
Պայծառ պատկերի ու անբիծ կեանքի փրցի
Նկարագիրը ով պիտի անի, գործա լոթ
Լոել է խօսնակ խեղճ հայաստանի:

Էլ ով պիտ պատմէ, թէ ինչ նազելի
Քայլքով ման կդաք դաշտում ծաղկալի,
Եւ վարդի թերթին յաղթող շրթունքով
Ժպիտ ու համբուլը կծօնէք սիրով:

Հայոց մանուկներ, էլ ով կտայ ձեզ նյաթ
Մեր մայր աշխարհի պատմական քարտէզ,
Ու ընտիր նախնեաց գործերը փայլուն
Ո՞վ պիտի ցոյց տայ խօսքերով զեղուն:

Զկայ ոչ մի տեղ քարը հող, ծառ, ծաղիկ,
Որոնց չգովէր իւր ոճով գողարիկ.
Թէ «հաւերն ի հունչ», թէ «հովերն ի մունջ»,
Թէ «օդն վառ վառ» և «ջուրն ի մըմունջ»:
Սարեր ձիւնապատ, անտառներ մարմանդ,
Հովեր ծաղկածին, դաշտերն արդաւանդ,

Ամենքին իրենց արժանեաց յարմար
Փառաբանել է երգով բեղմնարար:

Նախահայրերի գերեզմաններին
Աղօթող կանգնել «խաչվէմք քովերին»:
Սյնտեղ Խոյի մօտ մեծ կուի դաշտում
Կարմիր վարդանին է անմահացնում.

Սյստեղ Սևանի ծովակի կղզում
Աշոտ Երկաթին գովում անկշտում.

Իսկ այլ տեղերում աամար թէ պալատ,
Թէ գիւղ, թէ քաղաք, շէն ու անապատ
Գովել է անչափ հոգով առգորւած՝
Տիուր ու ուրախ արտասուը թափած,
Միրով ու սրտով մեզ համար երգել,
«Հայոց աշխարհիկ, գարունդ է եկել»:

Որպէս ջանասէր մեղու թագուհի
Միշտ սաւառնումէր Հայոց աշխարհի
Երկնքի տակին ծաղիկ տեսնելու,
Հայ մանկանց համար մեղը շինելու:
Նա հիւթ էր բաղում հին ծաղկած Սսից,
Երբեմն փառապանծ ազատ Մասիսից.
Ու տղտղալով թոչում էր գնում,
Արագած սարից Միւնիքն էր անցնում:

Նոր ոտք գնելով Արծրունեաց Ռստան,
Թև էր տարածում դէպ Տուրուբերան.
Ներբովտ, Գրգուռի լանջերն քերելով,
Շըշան էր կազմում կորդւաց լեռներով:
—Եւ գիտէք ինչու.
—Գրքեր գրելու

Մեղ նւիրելու,
Որ Մայր Հայաստան
Ազատ, անսասան
Ապրի յաւիտեան:

* *

Բնութեան ծոցում.

Ահա ծաղկասփիւռ դաշտը գեղեցիկ
Իւր հոգեզրաւ տեսքով ազգեցիկ
Ամեն կենդանու է հրապուրում
Վայելել բարիք բնութեան ծոցում:
Զկալ խարութիւն ոչ ոքի համար.
Թէ համր ու խոռվ թշւառ ցաւագար,
Թէ առոլդ, զւարթ, հուժկու տղամարդ
Շնչումեն ազատ ու հոտոտում վարդ:
Միայն բնութեան հրազատ զաւակ
Զարքաշ մշակը միշտ խեղճ ու կրակ,
Զրկած կեանքի լոյսից փառունակ՝
Լինում է առակ մարդկանց նշաւակ:

* *

Ու ճոխ սալօնի գոյն գոյն թիթեռներ—
Չքնաղ օրիորդ, քնքոյշ տիկիններ
Բարձր են քրքջում, անհոգ ոստոստում
Մէկի տեղ երկու ասպետներ ճանկում.
Կովցած օրիորդն այսպէս է խորհում,
Կեղծ ժպիտն ներկած շբթունքն է շարժում.
«Ի՞նչ լաւ բան եղաւ. վաղը կը դնամ

Ես պարահանդէս, այնտեղ ցոյց կը տամ,
Որ ունիմ ես ջերմ երկրպագուներ
Իմ ակնարկներիս ճիշտ կատարողներ,
Որոնք թէ և մեծ ու շատ տգեղ են,
Բայց չէ որ յայտնի հարուստ մարդիկ են:
Նրանք կդառնան բաղդիս պատանդան

Ու ես կհասնիմ մեծ երջանկութեան:
Նրանց սազ չի գայ ինձ նման ջանել
Մի աղջկայ հետ հանդէսում պարել
Ու ես իրաւունք կունենամ անշուշտ
Միրտս ուզածի հետ պարելու կուշտ կուշտ:»

* *

Վճիտ աղբիւրի մարմանդների մօտ,
Ուր ուռացել են նունուֆար, հօրօտ,
Սեղան են նստել յայտնի քաղքցիք
Կրթւած, անկիրթ հարուստի որդիք,
Ակմբանոցի խաղասէր հերոս՝

Սէգ աքաղաղի նման փոսէ փոս,
Առաջնորդում է տիկին հաւերին
Ու իւր էռոթիւնն յայտնում բոլորին:
Քսւելով մէկի կրծքին ու կողքին
Շուրջն է պտտւում, նայելով չորս դին:
Ապա միւսի ձեռքն է համբուրում,
Ականջին գաղտնի խօսքեր փսփսում:
Երրորդին աչքով ու ոնքով անում,—
Փամաղըութեան նշաններ տալում.

Ու չորրորդի հետ թևանցուկ եղած
Գնում, անցնում է զլուխն վեր բռնած:

* *

Որպէս ջանասէր աշխոյժ մեղուներ
Գեղջուկ կոյս աղջիկ քողասէր հարսներ
Այն տեղ մշակած ընդարձակ դաշտում
Մինչև երեկոյ անդուլ աշխատում:
Դժւար աշխատանք ցերեկւայ շոքին
Ընկած է այդ թոյլ խեղճերի բաժին.
Զրկանք, նեղութիւն քաշում անձրկին՝
Վատնելով իրենց ուժերը վերջին
Չարչարում են միշտ, բայց անյուսահատ,
Որ ապրին պատովի, մնան անարատ:

Համեստ, չքնաղ կոյսն անուշ ժպիտով
Սիրալիր աչքերն քաղցը նայւածքով
Դարձնում է դէպ իւր աչք ձգածին,
Սրտին ու հոգուն նոր տէր դառածին.
Սակայն երկիւղից դողում է սաստիկ
Որպէս խիստ քամուց ուռենու ոստիկ:

* *

Մի զոյգ եղի հետ խղճուկ դիւղացին
Էլ արիւն քրտինք չմնաց թափեցին:
Դեռ չէր յաջողւել հերկն աւարտել
Եղի ուսն ուռել, անպէտք էր դառել,
Ինքը բեղարած, քնհատ ջարդած,
Մի կուշտ փոր հացի կարօտ մնացած,

Անպիտան եղի կողքի հետ թիկնած
Դառն մտածմանց մէջ էր ընկղմած:
Ու մտածումէր. ինչով հաց գնել.
Պարտքն ու ծանր հարկն ինչ կերպ վճարել,
Թէ այս տարի էլ անցած տարւայ պէս
Կարկուտ ու երաշտ, պատուհաս պէս պէս
Ոչնչացնեն արտ, տաւար, արօտ,
Թողնելով այսպէս չոր հացի կարօտ:

Ահա կինն եկաւ տխուր ու տրտում
Եւ աղեկտուր զրոյցներ անում.
«Այ մարդ, դու զիտես տանը հաց չկայ.
Տղայքս քաղցած ես թողի եկայ,
Որ քաղեմ բանջար—սիբելս, աւելուկ,
Ծնեփուկ, բոխի, մանտակ ու թելուկ
Ու տանիմ, խաշեմ, կերակուր եփեմ,
Սոված գառներիս մի քիչ կշտացնեմ»:
Աղի արցունք էր հոսում վշտագին
Ու հեկեկանք էր լսում դառնագին:
Գիւղացու յոգնած ու մոայլ դէմքին
Տիրեց խօլական արհաւերք ներքին,
Որպէս թէ մենակ թանձր խաւարին՝
Կապած, կաշկանդած ընկած է զետին.
Ահա գալիս է դահիմն սպանող
Եւ կամ գաղանը լափող, կլանող...
Բայց դեռ չէր ուզում, որ կինն հասկանայ,
Թէ ինչ վատթար օր նրան կսպառնայ
Երբ պարտատէրն ու անդութ հտրկահան
Իրան քարշ կտան բանտ ու դատարան:

* * :

Ծաղկուտ սարի կատարից
 Տխուր, տրտում եմ նայում
 Դէպի դաշտ ու հովիտներ,
 Ուր գեղջուկն է աշխատում:
 Սակայն որքան տանջւի,
 Քրտինք թափէ, չարչարւի,
 Այնքան քաղցած կմնայ,
 Կուրծքն արևով կվառւի:
 — Դաշտեր, ինչու չէք խղճայ
 Զեզ կեանք, հոգի տւողին.
 Ինչու քաղցած կթողնէք
 Թշւառ, չարքաշ մշակին:
 Հանդ ու արօտ տոչորւած
 Ամրան կիզող ջերմ օդով,
 Այսպէս տւին պատասխան
 Վշտի խորին զայրութով.
 — Որպէս հարսին գեղանի
 Մեղրածորան ստինքից
 Բղխում է կաթն անուշիկ
 Սիրոյ անհուն գորովից,
 Այսպէս էլ մեր ծաղկածին
 Ծործորներից է հոսում
 Աղբիւր գժիտ սառնորակ
 Արտ ու մարգեր ոռոգում,
 Որ քրտնաշան մշակը
 Լի ու առատ ստանայ

Իւր վաստակի արդիւնքը
 Ու հանգիստ կեանք ունենայ:
 Սակայն ձարպիկ ձեր ձեռքեր
 Խլումեն խեղճ բանւորից
 Մեր—մայր հողի արգանդի
 Պտուղները հիւթալից:
 Մինչև որ չկտրւին
 Յափշտակող այդ ձեռքեր,
 Ոչ ոք իրա ճակատի
 Քրտնքին չի դառնայ տէր:
 Մըրիկներից յետոյ.
 Լոեց դառնաշունչ կատաղի քամին,
 Որ ցուրտ հիւսիսից փչումէր ուժգին:
 Ու էլ չպիտի հնչեն մահաբեր
 Կիզող հարաւի դժողքի հովեր:
 Հէրիք է, որքան գոռում, գոչումով
 Իրար հանդիպան ներհակ հոսանքով:
 Բուք, մըրիկով աւեր դարձուցին
 Այս շէն ու պայծառ հայրենիք հային:
 Ահա գալիս է կենսատու դարուն
 Բերելով իւր հետ եղանակ սիրուն.
 Ու երկրագործ նորաբաց դաշտում
 Մեծ եռանգով է վարում, վաստակում:
 Բնութիւնն ազատ եղիամից, տապից
 Սփռումէ բարիք անհուն գանձերից.
 Ցնծումէ երկիր բոլոր պերձութեամբ

Ու զւարթարար կեանքի քաղցրութեամբ:
Ինչ հրաշալի է, որքան գեղեցիկ.
Գարնան առաւօտն ու զեփիւռ մեղմիկ,
Երբ գոյն գոյն ծաղկանց թերթերից փայլուն
Կախւում են ցողի շիթեր պաղպաջուն:
Կարմիր արեկի նոր ճառագայթից
Շողում, շողողում է դաշտ շաղալից.
Յակինթ կաթիլն ու գոհար կոկոններ
Ժպտում են, բերկրում ինչպէս կոյս սրտեր
Ու գեղջուկն ուրախ՝ շինարար ձեռքով
Նորոգում է տունն քաղցը յոյսերով—,
Որ այսուհետեւ իւր արդար վաստակ
Պիտի վայելէ ինքն ու իւր զաւակ:

Գութան.

Այնաեղ կտրիչ տղամարդն
Հուժկու բազկով բոնել է
Իւր գութանի ծանր մաճն
Ու ձայնն անուշ ձգել է:
«Հօռօվել» է կանչում նա,
Ձեռքը ականջին դրած.
Հինգ-վեց հոտաղ ձայն կառնեն՝
Քնահարամ բեղարած.

Տաս-տասներկու զոյգ եզներ
Ու գոմէշներ չարաչար
Հարւածներով դադարած
Լուծ են քաշում քաջաբար:
Ու գութանը շրջելով
Խոր ու լայն առք մի կանգուն,
Իւր ետևից թողնումէ
Շարան շարան հող փխրուն:

* *

Ու մաճկալը մանկական
Միամտութեամբ է դիտում
Հերկած արտի ակօններն
Ու ինքն իրան պարծենում.

—Ահա այսպէս կոշտացած
Հողն է փափկում իմ ձեռքով.

Ու կցանեմ, կջրեմ
Ճակտիս առատ ըրտինքով:
Նա ժպտում էր ինքնագոհ—,
Որ անկարօտ պիտ ապրի,
Եւ սիրասուն գառներին
Նոր հանդերձներ պիտ առնի:

* *

Թուլանումեն մշակի
 Զլուտ, ուժեղ բազուկներ,
 Երբ տեսնում է աղայի
 Ճոխ նիստ ու կացն ու զարդեր.
 Ու յիշումէ իր կեանքի
 Անցեալ, ներկայ դաւն օրեր
 Ու կոյր միտքը պատում են
 Ծանր թախծի սև ամպեր:
 Սակայն յոյսի մի նշոյլ
 Խաւար մտքում ծագումէ. —

Հեռանկարն նոր կեանքի
 Աղօտ կերպով տեսնումէ:

ԴՆԵԱԿ.

Երբ տւնջեան հոգսերով
 Խոռված էր մեղմ հոգիս,
 Ամօթի վիշտ՝ մտածմանց
 Տեղիք կտար խեղճ մտքիս.
 Պատկերացան իմ առաջ
 Կեանքի, մահւան տեսիներ.
 Անուրջ ու խոլ ցնորք չէր,
 Այլ սին կեանքի պատկերներ.
 Այնտեղ սարի բարձունքին
 Կանգնած էր մի մեծ դղեակ,

Որտից իշխում էր երկրի
 Տէր իշխանը սանձարձակ:
 Նորա շքեղ պալատում
 Ճոխ, բարելից սեղանի
 Շուրջն են նստած զարդարուն
 Արք և կանայք գեղանի:
 Հանդերձները ուկեհուռ
 Ցակինթներով են նիշած
 Պերճանքի ու ճոխութեան
 Փայլքն ամենքին է տիրած.
 Նշան, զբան շողջողուն
 Ճաճանչներ են արձակում,
 Մետաքսեայ նուրբ շորերն էլ
 Խիստ գուրական խշշում:
 Ու խմում են ոգելից
 Տեսակ տեսակ ըմպելիք
 Ու ուտում են համադամ
 Կերակուրներ ու խորտիկ:

* *

Հովտում հրդեհ բռնկւած
 Ճարակումէ գիւղ քաղաք
 Մարդիկ ինչպէս ներոնեան
 Կերոններն՝ անձարակ

Նստել մոխրի կոյտերին
Կուլան ցըտից կուչ եկած:
Բայց դղեակի խնջոյքը
Իւր լիութեամբն անսպառ
Դարձաւ արդէն անարդ վայր
Խէնեներին անպատկառ:

**

Կրակ ու բոցից ահա դուրս եկան
Ըմբոստ զոհերի հրեղէն ուրւական
Ու գրկախառնած թանձր ծխի հետ
Ծառացան դէպ վեր ու կորան անհետ:
Մորթոտւած ընկած սուրբ գիշերից,
Ազատութեան վեն նահատակներից
Կարծես գոյացան հուժկու վիթխարի
Ու սարսուռ աղդող ովիք քաջ արի:
Սրանք իրենց տաք արիւնով ներկած՝
Բուրեցին ինչպէս կարմիր վարդ բացւած,
Ու սլացան վեր դէպ անհուն եթեր
Իրեկ վրէժառուի սուր սուր սլաքներ:

**

Առաւօտեան կարմիր արփին
Լուսապայծառ ցոլմունքով

Քոցավառւած խորովւում,
Աճիւն, փոշի են դառնում,
Եւ ճենճերի հոտ անուշ
Դէպ դղիակն է բարձրանում:
Սաստիկ քամին դիւածին
Իւր գորշ շապիկն հագած
Իրեկ հմուտ սարկաւագ
Մերթ մեղմ, մերթ բամբ ձայն ձգած
Լուսաւորում էր դղեակն
Մարդկանց ճարպի բոցերով
Ու խնկարկում ծխացող
Ամբողջ հովտի բուրվառով:

**

Այն տեղ հեռու խոր ձորում
Սպառազէն զինւորի
Սուրը արագ էր հնձում
Անդաստաններ կենդանի:
Հարսին, կոյսի պատիւը
Զոհէր բերւում բռնութեան:
Հոսում կարմիր արիւնը
Փողովրդեան անսպաշտան:
Ու կենդանի մնացած
Ծերն ու մանուկը քաղցած

Ողողել էր երկինք, գետինք,
 Որ ծածկւած էր շաղ շողբով:
 Ու դղեակի տէր իշխանի
 Բուրաստանի ծաղիկներ
 Խորհրդաւոր խօսում էին
 Իրարու հետ շատ բաներ:
 —Տեսէք, ահա թերթիս վերայ
 Ինչ հրաշալի մի շիթ կայ.
 Ինչ գոյն ու փայլ խայտաճամուկ,
 Ասես, որ նա ցոյց չի տայ:
 Զքնաղ կոյսի կապոյտ աչքից
 Սիպտակուցի մասեր կան,
 Ալ ու կարմիր այտից ծծած՝
 Անբիծ արեան նիշեր կան:
 Սա արցունք է բռնաբարւած,
 Որը մնացած գեղջկուհու,
 Որի հայրը սպանւեցաւ
 Տիրոջ խօսքով ահարկու:
 Սիրոյ անհուն աւազանից
 Բռնի ցայտած ջինջ ցողիկ,
 Գիտեմ անչափ թշւառ ես դու,
 Որ ցողում ես իմ թերթիկ՝
 Գունով, հոտով վարդեր տալու
 Չար իշխանին քարասիրտ,

Բայց ինչ արած՝ ողջ երկիրն է
 Գերի նրա կամքին բիրտ:
 —Վրաս իջած այս շաղերը
 Առոյդ մարմնից են լուծւել
 Որ բանտի մէջ շղթայակոծ
 Տանջանքից է քայքայւել
 —Ես կաթին է արիւն քրտինք
 Չարքաշ մշակ բանւորիս,
 Որ թափել է իշխանական
 Պալատները շինելիս
 Ու նրանց մէջ ապրողներին
 Շուայլ սեղան կազմելիս:
 —Երբ իշխանի սուրբ կտրեց
 Մանկան վիզն ու մօր ծիծը,
 Կաթն ու արիւն իրար խառնած՝
 Գոյացաւ այս ցողիկը.
 Ու հանգչաւ իմ ճերմակ թերթիս
 Անմեղութեան ժպտի պէս.
 Սա բնութեան օրէնքի դէմ
 Մի հէզնանք է դառնապէս:

Զայրացած ծով ամբոխի
 Ալեաց փրփուր կատաղի
 Գալում, բաղմաւումէր ուժգին
 Գոռոզք բերդի հիմունքին,
 Ու ճըղփուն ձայն հանելով,
 Յետ էր քաշւում շտապով:
 Գոնջ իշխանն էլ կաշխատէր,
 Որ ճանկերը խոր խոթէր
 Իւր զոհերի սրտի մէջ,
 Սակայն ալիքն ել և էջ՝
 Ահեղ յործանք կազմելով
 Նորից բաղմաւում գոչիւնով:
 Փրփրագէզ մի կոհակ
 Ծովի անհուն լատակից
 Եկամ զըկեց այդ դղեակ
 Ու կործանեց հիմունքից:



ՀԱՅՈՒՆ ԱՐԴՅՈՒՆՈՒՅՆ

ՀՀ Ազգային գրադարան



NL0363676

58214